Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր երկրների՝ միացեք!

329.154(47.925)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿ, ՄԻՈՒԹԻՒՆ



Հ. Կ. Ե. Մ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹԻՒՆԸ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ



Երեվան 1922 թ.

Պետական հրատարակչություն

Թ. Զ. Գ. Ի-ին Խորհր. կենտ. Տպարան 300 օրինակ

122-49-2

Ա.Գ.Հ
122



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԴԵԼԵԳԱՏՆԵՐԻՆ

Թանկագին ընկերներ,

Համահայկական I համագումարը, որը կանչվեց 9-ը ամիս առանից առաջ, երբ բանվորա-գիւղացիական երիտասարդութիւնը նոր ելա ստեղծել իր մասսայական կոմմունիստական կազմակերպութիւնը, երբ նա չուներ դեռ կազմակերպչական ոչ մի փորձառութիւն, ձեվավորված կոմմունիստական աշխարհայացք, այլ այնպիսի պայմաններում, երբ միայն դասակարգային գիտակցութեամբ ու դեպի «Դաշնակցութիւնն» ունեցած տարրերային հակակրանքով նա ստեղծել ելա իր հեղափոխական կազմակերպութիւնը կռվելու համար կոմմունիստական կուսակցութեան հետ ձեռք-ձեռքի տված աշխատավորութեան թշնամիների դեմ։

Այս երիտասարդական I-ն համագումարը, ուղիղ գնահատելով Միութեան ներքին դրութիւնը, Կոմ. Կուսակցութեան և Խորհրդային իշխանութեան առաջադրած անհետաձգելի խնդիրները, հրահանգեց նորընտիր կենտրոնական Կոմիտեին Միութեան ամբողջ աշխատանքը հետագայում տանել հետևեալ երեք ուղղութեամբ.

Ի նկատի ունենալով, որ Միութիւնը իր ամբողջ մասսայով չունի վոչ մի պատրաստականութիւն, նույնիսկ մեծ տոկոսը նրա անդամների գրել ու կարդալ չգիտե, որպիսի պայմաններում անհնար է որևիցե արդիւնավետ աշխատանք և այն, որ միութիւնը կազմակերպչորեն դեռ ևս թույլ է.

1. ամրացնել միութիւնը կազմակերպչական տեսակե-

տից, ուժեղացնել միութենական ապպարատները՝ ներքին խորացրած կրթական աշխատանք տանելու համար։

2. Տանել ըստ հնարավորութեան խորացրած կրթական աշխատանք։

3. Ամբողջ ուժով ու բոլոր հնարավոր միջոցներով օժանդակել Խորհրդային Իշխանութեան ու Կարմիր Բանակի ուժեղացմանը։

Համագումարի հրահանգը, չնայած աշխատանքի անհպաստ ու մի շարք դժվարին պայմանների, Կենտկոմի կողմից գործադրված է, իհարկե, մի շարք հնարավոր պակասութիւններով։

II-րդ համագումարի նախորեակին մենք արդեն ունենք ավելի գիտակից, ինչպես խորհրդային, նոյնպես և միութենական աշխատանքի շրջաններում վորոշ փորձառութիւն ունեցող կազմակերպութիւն։

Մեր կազմակերպութիւնները հաշուետրման ժամանակաշրջանում կարողացան բավականին ամրանալ և անցնել արդեն միութեան հիմնական աշխատանքին՝ ներքին խորացրած կրթական գործին։

Հիմա, ընկերներ, երբ մենք ձեռնարկում ենք արդեն Միութեան լայն շարքերի լուրջ կրթութեան գործին, առաջին հերթին մեզ առաջ ցցվում են մի շարք դժվարին արգելքներ, ինչպես օրինակ աշխատավորութեան տնտեսական (մասնավորապես աշխատավոր երիտասարդութեան) ծանր վիճակը, նմանապես և մի շարք ուրիշ պայմաններ, վորոնք սրմատապես կախված են հանրապետութեան տնտեսական դրութիւնից։ Շատ խանգարում է նաև այն, վոր մենք չունենք պատրաստված ընկերներ, ակտիվիստների կադր, վորը պիտի տանի առաջադրված կրթական աշխատանքը ու միութեան ղեկավարութիւնը։

Այս արգելքները մենք կկարողանանք հաղթահարել, եթե եռանդուն կպչենք գործին։

Ռ. Կ. Կ. վերջացած XI. Համագումարը, ընդգծելով դիւղացիութեան վորոշ հեռացումն պրոլետարիատից, բացատրեց այդ նրանով, վոր մենք չենք իմանում տնտեսութիւնը ղեկավա-

թել այնպես, ինչպես հարկն է, և որ մենք չենք կարողանում կարգավորել նիւթական բարիքների դասավորումը։

Արդիւնաբերութեան կարգավորման ու գիւղացիութեան հետ սերտորեն շաղկապման անհրաժեշտ միջոցը դա ամենալայն չափերով օգտագործումն է բուրժուական մասնագետների, նրանց ձեռքերով մեր տնտեսութիւնը կառուցելն է, և միւս կողմից՝ բարձրացնել կոմունիստների կուլտուրական մակարդակը։

Հաջորդ տարին, դա պրոլետարիատի ավա՛զարդի ուսման տարին է լինելու։

Համագումարը վորոշել է նաև, որ «երիտասարդութիւնը մինչև 20 տարին (լրացած) բացի Կարմիր բանակայինները, կարող է մտնել Կոմ. Կուսակցութեան մեջ միմիայն Կ. Ե. Մ. միջոցով»։

Մեր Կուսակցութեան այս վորոշումը նշանակում է, վոր Կուսակցական անդամների նոր կադրերի պատրաստութեան գործը հանձնվում է ամբողջապես և անմիջականորեն մեր միութեանը։

Կուսակցական կազմակերպութիւնները այսպիսով ավելի շահագրգռված լինելով միութեան աշխատանքով քան մինչև այժմ—կոչնեն մեզ՝ հաջողութեամբ լուծելու մեր առաջ դրված խնդիրները։

Միութիւնը ձեռնարկում է ուսման լուրջ շրջանին։

Լարենք մեր ուժերը։ Վերջ դնենք անկանոն աշխատանքներին և պրոլետարիատի ղեկավար Կոմ. Կուսակցութեան օժանդակութեամբ ու ղեկավարութեամբ՝ ձեռնարկենք կոմունիստական կրթութեան լուրջ ու սիստեմատիկ աշխատանքին։

Կոմունիստական բարևներով

Հ. Կ. Ե. Մ. Կենտրոնական Կոմիտե

Հ. Կ. Ե. Մ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹԻՒՆԸ II ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Առաջին համահայկական համագումարը, որը հրավիրվեց 1921 թ. օգոստոսին, եկավ ասելու, որ երիտասարդական շարժումը արդեն լայն ծավալ է ստացել Հայաստանում և նոր խնդիրներ դրեց նորընտիր Կենտրոնական Կոմիտեի առաջ։ Այդ խնդիրներից ամենակարեւորները՝ բանվորագիւղացիական երիտասարդութեան լայն մասսաների կոմունիստական դաստիարակութիւնը, որը վերջին հաշվով կոմերիտմիութեան բոլոր աշխատանքների առանցքն է կազմում։

Այդ ուղղութեամբ նախկին Կենտրոնական Կոմիտեն գրեթե վոչ մի աշխատանք չեր տարել, վորովհետև մինչև 1-ին համահայկական համագումարը կենտկոմի և տեղական միութենական բոլոր օրգանների առաջ միմիայնմի խնդիրներ դրված՝ դրավել միութեան շարքերը աշխատավոր երիտասարդութեան հոծ դանդվածներին և այդպիսով ստեղծել նախկին «Սպարտակ» կազմակերպութեան բեկորներից մասսայական կոմունիստական կազմակերպութիւն։ Այդ աշխատանքը տարվում եր մակերեսային ագիտացիայի, միտինգների և «շաբաթների» միջոցով և դրա համար էլ չեր կարող համարվել լուրջ աշխատանք, ուղղված միութեան անդամների քաղաքական պատրաստութեան մակարդակի բարձրացմանը։

Մինչև 1-ին համահայկական համագումարը, կարելի է ասել, որ միութեան անդամները իրենց քաղաքական պատրաստութեամբ մոչնչով չեին զանազանվում անկուսակցական երիտասարդներից։

Սակայն նրանց մեջ արդեն արթնացել եր որոշ չափով դասակարգային ինքնագիտակցութիւնը և խավարից դուրս գալու ցանկութիւնը։ Նախկին մեթոդներով աշխատանքը հնարավոր չեր տանել, միտինգները չեին հետաքրքրում միութեան անդամներին, այլ, ընդհակառակը, ձանձրացնում եին նրանց։ Անհրաժեշտ եր սկսել սիստեմատիկ խորացրած պրոպագանդիստական աշխատանք և այդպիսով անցնել միութեան հիմնական խնդրին՝ կոմունիստական դաստիարակութեան գործին։

Այդպիսով ուրեմն այդ աշխատանքը պիտի դառնար նորընտիր կենտկոմի հետագա գործունեութեան ընթացքում, նրա ուշադրութեան կենտրոնը։

Սակայն միութեան անդամների դաստիարակութիւնը հնարավոր եր լավ հիմքերի վրա դնել միմիայն այն դեպքում, երբ մեր կազմակերպութիւնները կամրանային կազմակերպչական տեսակետից և կներկայացնեին իրենցից կենտրոնացած և կոմպակտ մի մարմին։

Հենց այդ պատճառով էլ Կենտրոնական Կոմիտեի 9 ամսվա գործունեութեան միջով կարմիր թելի պես անցնում է կազմակերպչական աշխատանքը, որը անշուշտ հնարավորութիւն եր ստեղծում տանելու խորացրված պրոպագանդիստական աշխատանք։

Կենտկոմին հաջողվեց միմիայն պրոպագանդիստական աշխատանքներին հիմք դնել և վերջ տալ այն անսիստեմ ագիտացիոն աշխատանքին, որը մինչև այդ տարվում եր միութենական բոլոր կազմակերպութիւններում։

Բաժանելով կենտկոմի կողմից տարված աշխատանքը

երկու մասի՝ կազմակերպչական և ագիտացիոն պրոպագանդիստական, անհրաժեշտ է մանրամասնորեն կանգ առնել նրանց վրա և պատկերել այդ աշխատանքների բովանդակությունը և նրանց տված արդիւնքները։

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Համահայկական, Կովկասեան և համառուսական համագումարները զգալի կերպով թուլացրին և քայքայեցին միութենական բոլոր կազմակերպութիւնները և ղեկավարող օրգանները, վորովհետև այդ շրջանում գրեթէ բոլոր պատասխանատու աշխատողները թողին իրենց աշխատանքը և ուղեվորվեցին իբրև պատգամավորներ հիշեալ համագումարներին մասնակցելու։

Միութենական աշխատանքները միանգամայն կանգ եին առել։ Պետք եր կենդանութիւն տալ այդ մեռած կազմակերպութիւններին, ուժեղացնելով գավկոմները և շրջկոմները, միաժամանակ վերջ տալ միութեան շարքերում առաջացած լքմանը, բարձրացնելով նրանց մեջ միութենական դիսցիպլինան։

Նախ և առաջ անհրաժեշտ եր ուժեղացնել և ձևակերպել կենտրոնական Կոմիտեի ապպարատը։ Կենտրոնական Կոմիտեի առաջին պլենումը գավկոմների քարտուղարների մասնակցութեամբ (1921 թ. նոյեմբերի 1-ին) եկավ այդ բացը ծածկելու։ Վերակազմվեցին կենտկոմի բոլոր բաժինները՝ կազմ.-հրահանգչական բաժինը ինֆորմացիոն ենթաբաժնով և ագիտ-պրոպ բաժինը իր մամուլի ենթաբաժնով։ Նույն այդ բաժինները ուժեղացվեցին պատասխանատու և տեխնիկական աշխատողներով։ (Տնտեսա-իրավական բաժինը վերացվեց ավելորդ լինելու պատճառով)։ Նույն այդ պլենումը աշխատողների տեղափոխութիւն կատարեց, թարմացնելով գավկոմ-

ները և միաժամանակ ուժեղացնելով և աշխատունակ դարձնելով նրանց կազմը։

Այդ առաջին կազմակերպչական քայլն եր, վոր սթափեցրեց քայքայված կազմակերպութիւնները և ոտքի կանգնեցրեց նրանց։

Աշխատողներ ուղարկվեցին նաև Դարալագեազ, ուր մինչև այդ միութեան կազմակերպութիւն գոյութիւն չուներ։

Այդ մոմենտից աշխատանքները մտան նորմալ հունի մեջ և ընթանում եին քիչ թե շատ կանոնավոր կերպով։ Բջիջների աշխատանքը ուժեղացնելու և ինտենսիվ դարձնելու նպատակով, կազմ. բաժնի կողմից տրված հրահանգների և ցուցմունքների հիման վրա, բոլոր գավառներում և շրջաններում հրավիրվեցին բջիջների և շրջկոմների քարտուղարների խորհրդակցութիւններ, որտեղ պարզվեցին և մշակվեցին հետագա աշխատանքի այն ձևերը, որոնք կառողջացնեին մեր բոլոր կազմակերպութիւնները։ Հետագայում այդ խորհրդակցութիւնները պարբերաբար հրավիրվում եին համարեա բոլոր գավառներում։

Աշխատանքը տրանսպորտի վրա

Ոտքի կանգնեցնելով գիւղական և քաղաքային կազմակերպութիւնները բոլոր գավառներում, կենտկոմը իր ուշադրութիւնը դարձրեց բանվորական կազմակերպութիւնների վրա, վորոնք կենտրոնացած եին գլխավորապես երկաթուղագծի շրջանում։

Մինչև այդ, աշխատանքը երկաթուղագծի շրջանում տանում եին Երևանի և Ալեք-պոլի երկաթշրջկոմները, գորոնց աշխատանքը անմիջապես ղեկավարում եին հա-

մասատասխան դավկոմները (Երևանի և Ալեքսոլի)։

Այդ շրջանում երկաթուղային կազմակերպութիւնները չափազանց թույլ եին և փաստորեն գոյութիւն ունեին միայն Երևան և Ալեք-սոլ կայարաններում։

Գծի վրա գրեթե վոչ մի կազմակերպութիւն չկար, իսկ եղածներն ել գոյութիւն ունեին միմիայն թղթի վրա։

Պարզ դիտակցելով, վոր քաղաքական աշխատանքը երկաթուղու վրա թե պետութեան և թե միութեան շահերի տեսակետից (միութեան պրոլետարական կորիզի ուժեղացումը) աչքի ընկնող տեղ է բռնում, և հարվածային համարելով այդ աշխատանքը, կենտկոմը իր նիստերից մեկում վորոշեց կապել անմիջական կերպով երկաթշրջկոմները իր հետ և ստանձնել նրանց աշխատանքի անմիջական ղեկավարութիւնը, վորովհետև դավկոմները իրենց սեփական ուժերով ի վիճակի չեին տանելու այդ աշխատանքը։

Տրանսպորտի վրա ըստ այդ վորոշման պիտի աշխատեր կենտկոմի պրեզիդիումի անդամներից մեկը դեկտեմբեր ամսից սկսած։ Կենտկոմի այդ քայլը դրական արդիւնքներ տվեց։ Շրջկոմներ կազմակերպվեցին նաև Ղարաքիլիսայում և Սանահնում, վորոնք անմիջապես անցան աշխատանքի։ Ներկայումս համարեա ամբողջ գծի վրա գոյութիւն ունեն միութենական բջիջներ, վորոնք դեռ նոր են ձևակերպվում և ամրանում. իսկ կենտրոններում, ինչպիսին են Երևան և Ալեքսոլ կայարանները, միութեան բջիջները կազմակերպչական ամուր են և արդեն ձեռնամուխ են եղել խորացրած ագիտ-պրոպագանդիստական աշխատանքներին։ Հետագայում անհրաժեշտ է ուժեղացնել աշխատանքը գծի վրա և այդ հանգամանքի վրա ուշադրութիւն պիտի դարձնեն այն դավկոմները, վորոնց վերջերս տեղի ունեցած կոնֆերանսներից հետո հանձնվել է երկաթ շրջկոմների աշխատանքի ղեկավարութիւնը։

Զ ս ո ւ մ ը

Դեռ կենտկոմի 1-ին պլենումին դրված եր միութեան շարքերի զտման հարցը։

Պլենումը հետևեալ կարծիքը հայտնեց զտման մասին իր բանաձևի մեջ, վոր զտումը առանձին դրական արդիւնքներ չի կարող տալ այնպիսի մի երիտասարդ կազմակերպութեան, ի չլիսին Հ. Կ. Ե. միութիւնն է, այլ, ընդհակառակը, կ'կանգնեցնի վորոշ ժամանակով միութեան աշխատանքները, վորոնք այդ միջոցին արդեն կանոնավոր կերպով առաջ եին ընթանում։

Սակայն անդրկովկասեան կոմիտեի կատեգորիկ առաջարկութեամբ, կենտկոմը ստիպված եր հունվար ամսին անցնել միութեան շարքերի ընդհանուր զտման։

Զտումը բացի Զանգեզուրի և Դարալագեազի գավառներից, վորտեղ միութեան կազմակերպութիւնները ապրում եին աշխատանքների կազմակերպչական շրջանը, անցավ միւս բոլոր գավառներում։

ԶՏՄԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Կազմակերպութիւն	Դուրս արված-ների թիվը	Թեկնածու փոխադրվածների թիվը
Երևանի	100	194
Ալեքսանդրապոլի	91	15
Քարվանսարայի	180	176
Նոր-Բայազետի	99	41
Լոռվա	209	146
Ղարաբիլիսայի	107	—
Էջմիածնի	107	52
Ընդամենը	893	624

893 հոգի դուրս են արված հետևեալ պատճառներով.

1. Միութեան դիսցիպլինան խախտելու համար . . .	338 հ.	(36,54%)
2. Միութեան անհարազատ տարրեր (կուլակ, սպեկուլեանտ, կարերիստ. մորթապաշտ, զեղծարար և այլն)	212	(25,53%)
3. Փոքրահասակ լինելու պատճառով (14 տարեկանից ցած) . . .	105	(11,75%)
4. Հակահեղափոխականներ, դասալիքներ և շովինիստներ . . .	93	(10,21%)
5. Այլ և այլ պակասութիւնների համար	80	(8,7%)
6. Իրենց կամքով հեռացածներ . .	37	(4,14%)
7. Ժամանակ չենթարկվելու պատճառով	28	(3,13%)
Ընդամենը	893 հոգի	

Անդամութիւնից թեկնածու են փոխադրված ինտելիգենտները և այն ընկերները, որոնք նոր են անցել միութեան շարքերը։ Ժուռմը ունեցավ իր դրական և բացասական հետևանքները։ Նա դուրս արեց միութեան շարքերից, ինչպես թվական տվեալներն են վկայում, միութեան անհարազատ տարերին և նրա շարքերում կազմալուծում առաջ բերող անհատներին։ Ժուռմը բարձրացրեց միութեան հեղինակութիւնը անկուսակցական մասսաների աչքերում և ուժեղացրեց դիսցիպլինան միութեան անդամների միջև։

Միւս կողմից նա մեկ և կես ամսվա ընթացքում կանգնեցրեց միութեան աշխատանքները և նոյնիսկ հարված հասցրեց այն կազմակերպութիւններին, ինչպես օրինակ Լոռվա կազմակերպութեանը, ուր ժուռմը անցել էր չափազանց անկանոն կերպով։

Կենտկոմին չհաջողվեց զտումը օգտագործել միութեան անդամների հաշվեառման համար, վորովհետև շատ գիւղական բջիջներ հնարավորութիւն չեղավ զտման ենթարկելու փոխադրական միջոցների և կապի բացակայութեան պատճառով (Ախտայում, Աբարանում, Բասարգեչարում և այլն)։

Աշխատանքը ազգային փոքրամասնութիւնների մեջ

Կենտրոնական Կոմիտեն իր ուշադրութիւնը պիտի դարձներ նաև Թուրքական բջիջների վրա, վորոնք գոյութիւն ունեն համարեա բոլոր գավառներում։ Աշխատանքը այդ բջիջներում տարվում եր չափազանց թույլ կերպով Թուրք ակտիվ աշխատողների բացակայութեան պատճառով։ Նոր-Բայազետի և Քարվանսարայի գավառներում, ուր գոյութիւն ունեն միութեան խոշոր Թրքական կազմակերպութիւններ, վերոյիշեալ հանգամանքների շնորհիվ գրե Թե վոչ մի աշխատանք չեր տարվում։ Կենտկոմը ուղարկեց հիշեալ գավառները իր երկու Թուրք պատասխանատու աշխատողներին մշտական աշխատանք տանելու Թրքական բջիջներում։

Սակայն Քարվանսարայում աշխատող ընկերը ստիպված եր զորակոչի ենթարկվելու պատճառով Թողնել իր աշխատանքը, այնպես վոր այժմ աշխատանքը քիչ Թե շատ բավարար տարվում է միմիայն Նոր-Բայազետի գավառում։

Ընդհանրապես կարելի է ասել, վոր աշխատանքը մուսուլման երիտասարդութեան մեջ միշտ կաղացել է և այժմ ել կաղում է։ Անհրաժեշտ է առաջ քաշել Թուրքական բջիջներից քիչ Թե շատ պատրաստված շնորհալի անդամ-

ներին և այդպիսով ստեղծել թուրք երիտասարդութեան մեջ աշխատողների անհրաժեշտ կադր։

Միւս ազգային փոքրամասնութիւնների մեջ (հոյների, մալականների, ասորիների և այլն) աշխատանքը տարել են դավկոմները իրենց սեփական ուժերով։ Աշխատանքը ազգային փոքրամասնութիւնների մեջ տարվել է սովորական մեթոդներով։

Կապը կուսակցութեան, պրոֆմիութիւնների եվ խորհրդային օրգանների հետ

Կենտկոմը իր գործունեութեան ընթացքում կարողացել է սերտ կապ ստեղծել թե կենտրոնում և թե դավառներում կուսակցութեան հետ, մանավանդ «կուսակցութեան և միութեան մերձեցման շաբաթ»-ից հետո, վորը եկավ ավելի սերտ և օրգանական կապ ստեղծելու կոմ. կուս. հետ, սկսած բջիջներից մինչև կենտրոնական կոմիտեն։

Պրոֆմիութիւնների խորհրդում կենտկոմը միշտ ունեցել է իր ներկայացուցիչին։ Կապը գլխաղլուսավարի հետ, փաստորեն բացակայել է և գոյութիւն է ունեցել միմեայն թղթի վրա։

Ինֆորմացիա եվ ստատիստիկա

Համահայկական համագումարից հետո անմիջապես անցնելով աշխատանքի, կենտկոմը լուրջ ուշադրութիւն դարձրեց տեղերի կանոնավոր հաշվետվութեան և առհասարակ ինֆորմացիոն գործի վրա։

Մի շարք տեղերին տված հրահանգների և ցուցմունքների շնորհիվ, կենտկոմին հաջողվեց սերտ կապ

ստեղծել փոխադարձ ինֆորմացիայի միջոցով գավառների հետ, որը հնարավորություն էր տալիս հաշվի առնել տեղերի փորձը և ճշմարիտ կերպով ղեկավարելու գավառային կազմակերպությունների աշխատանքը։

9 ամսվա ընթացքում կենտկոմը ստացել է բոլոր գավառներից հետևեալ ինֆորմացիոն նյութերը.

Գ Ա Վ Ա Ռ	Սեպտեմբերի և հոկտեմբերի					Նոյեմբերի				
	թրեսոդակցիա	տիպիկ	դվիժոնոյ ռազոմը	կոյուղ	ամենուրեք	թրեսոդակցիա	տիպիկ	դվիժոնոյ ռազոմը	կոյուղ	ամենուրեք
Երևանի	—	—	—	—	—	1	3	2	3	—
Ալեքսանդրի	2	2	—	1	12	2	3	—	—	6
Լոռվա	1	—	1	—	8	1	4	6	—	9
Եջմիածնի	2	1	—	—	18	1	3	3	1	1
Ղարաքիլիսի	2	—	—	—	11	2	1	1	—	12
Գարմանաբ.	—	—	—	—	14	1	2	2	1	9
Ն-Բայազետի	2	—	—	—	16	—	—	—	—	7
Զանգեզուրի	1	—	—	—	—	—	—	—	—	—
Դարալագեազի	—	—	—	—	—	1	—	—	—	—
Ընդամենը	10	3	3	1	79	9	16	14	5	44

Դեկտեմբեր, հունվար					Փետրվար, մարտ					Ապրիլ, մայիս					
Զեկուցում.	Սվտակա	Սրբանադր.	Նամակ	Հեռագիր	Զեկուցում.	Սվտակա	Սրբանադր.	Նամակ	Հեռագիր	Զեկուցում.	Սվտակա	Սրբանադր.	Նամակ	Հեռագիր	Ընդամենը
2	6	9	—	—	2	—	1	—	—	—	3	—	—		32
2	5	7	1	28	3	—	9	5	14	2	—	1	—	3	110
1	1	2	3	49	2	1	6	3	13	1	6	2	—	10	130
1	3	4	—	28	2	4	3	1	1	2	4	5	—	2	90
2	1	3	1	28	1	—	—	3	6	1	—	—	—	—	75
1	3	2	1	22	—	—	3	4	5	—	—	—	—	2	72
2	2	1	1	24	—	—	1	2	8	1	4	—	—	5	76
1	—	1	—	—	—	—	—	—	7	1	—	—	—	5	16
—	1	—	3	5	1	1	1	6	16	—	—	—	1	6	42
12	22	29	10	184	11	6	24	24	70	8	17	8	1	33	643

Կենտկոմի ինֆ.—ստատիստիկական ենթաբաժնին առաջիկա շրջաններում չափազանց դժվար եր հաշվի առնել միութեան անդամներին, վորովհետև գավկոմների ստատիստիկական ապպարատը թույլ եր կազմակերպված և նույնիսկ իրենք գավկոմները ստույգ թվական տվեալներ չունեին գավառի կազմակերպութեան անդամների քանակի մասին։ Ինչպես վերև հիշեցինք, գտումը նույնպես այդ ուղղութեամբ վոչինչ չտվեց և միմիայն վերջերս ստատիստիկական բաժնին հաջողվեց քիչ թե շատ ստույգ թվական տվեալներ հավաքել միութեան անդամների քանակի մասին։

Այդ տվեալները հետևեալն են.

ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ

ԳԱՎԱՌ	Անդամ	Թեկնածու	Ընդամենը
Երևանի . .	1254	404	1658
Էջմիածնի . .	628	54	682
Ալեքսոլի . .	520	—	520
Դարաքիլիսայի .	160	61	221
Լոռվա . . .	302	183	485
Նոր-Բայազետի .	636	193	829
Թարվանսարայի .	475	225	700
Զանգեզուրի . .	1810	—	1810
Դարալագեազի .	190	3	193
Ընդամենը .	5975	1123	7098



ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

ԳԱՎԱՌ	ՍԵՌ		ԸՆԴԱՄԵՆԸ	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ			
	Տղամ.	Աղջիկ		Բանվոր	Գիւղացի	Հոգևոր. քահանայ.	Հասարակ. դասակ.
Երևանի . .	1570	88	1658	117	1356	185	—
Էջմիածնի . .	670	12	682	9	597	76	—
Ալեքսանդրի . .	500	20	520	80	400	40	—
Ղարաքիլիսայի .	178	43	221	65	142	14	—
Լոռվա . . .	447	38	485	81	372	32	—
Նոր-Բայազետի .	792	37	829	33	707	89	—
Թարվանսարայի .	635	65	700	15	650	35	—
Դարալագեազի .	191	2	193	—	178	15	—
Զանգեզուրի . .	1800	10	1810	25	1755	30	—
Ընդամենը .	6783	315	7098	425	6157	516	7098

Հ Ա Ս Ա Կ

Գ Ա Վ Ա Ռ	14—16	16—18	18—20	20 և ավելի	Ընդամենը
Երևանի . .	580	664	318	96	—
Էջմիածնի . .	85	196	281	120	—
Ալեքսալի . .	165	100	144	111	—
Ղարաքիլիսայի .	157	43	9	12	—
Լոռվա . .	67	150	185	83	—
Նոր-Բայազետի .	132	288	350	59	—
Թարխանսարայի .	170	220	190	120	—
Զանգեզուրի .	400	700	650	60	—
Դարալագեազի .	32	120	29	12	—
Ընդամենը .	1788	2481	2156	673	7098

ԿՐԹՈՒԹԻՒՆ *) ԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄ

ԳԱՎԱՌ	Անգրագիտ	Տարրական	Միջնակարգ	Ընդամենը	Բուսական դպրոց	Թեմական
Երեւանի . .	385	1170	103	—	36	37
Էջմիածնի . .	158	484	40	—	3	15
Ալեքսանդրի . .	160	351	9	—	15	3
Ղարաքիլիսայի .	88	125	8	—	3	10
Լոռվա . .	205	275	5	—	6	7
Նոր-Բայազետի .	382	438	9	—	13	26
Քարվանսարայի .	65	598	37	—	97	19
Զանգեզուրի .	900	875	35	—	90	—
Դարալագեազի .	138	54	1	—	1	—
Ընդամենը .	2481	4370	247	7098	264	117

*) «Միջնակարգ» սիւնեակում նշանակվածներից շատերը սովորում են և դեռ չեն ավարտել միջնակարգ դպրոց։

ԱՂԳՈՒԹԻՒՆ

ԳԱՎԱՌ	Հայ	Թուրք	Բուս (մարակ)	Քուրդ	Ասորի	Հուն	Ընդամ.
Երևանի	1451	152	2	6	46	1	—
Էջմիածնի	612	70	—	—	—	—	—
Ալեքսանդրի	520	—	—	—	—	—	—
Ղարաքիլիսայի	214	7	—	—	—	—	—
Լոռվա	404	—	28	—	—	53	—
Նոր-Բայազետի	699	111	9	10	—	—	—
Թարվանսարայի	490	200	10	—	—	—	—
Զանգեզուրի	1800	10	—	—	—	—	—
Դարալագեազի	119	74	—	—	—	—	—
Ընդամենը	6309	624	49	16	46	54	7098

ՄԻԱԻԹԵՆԱԿԱՆ ՍՏԱԾ

1917 թ.	1918 թ.	1919 թ.	1920 թ.	1921 թ.
17	44	45	416	6576

Բջիջների թիվն և ընդամենը 542, որոնցից՝

ա. գործարանային 10. բ. երկաթուղային 19. գ. խորհրդային հիմնարկ. կից 16 դ. գիւղական 497.

Իր ողջ գործունեութեան ընթացքում կենտկոմը աշխատել է առաջ քաշել ակտիվ աշխատողներին և ավելի պատասխանատու աշխատանք տալ նրանց, և բացի այդ կարողացել է շարքային անդամներից (բջիջներից) առաջ քաշել շրջանային մասշտաբով աշխատողներ։ Այդ ուղղութեամբ հսկայական աշխատանք է կատարել Երևանի կազմակերպութիւնը, որը կենտկոմի միջոցով աշխատողներ է տվել համարեա բոլոր գավառներին։

Գավկոմները ավելի ևս աշխատունակ դարձնելու և թարմացնելու նպատակով, կենտկոմը պարբերաբար վերջոշ աշխատողների տեղափոխութիւններ է կատարել, միաժամանակ խուսափելով պլանամեր տեղափոխութիւններից, որոնք, ըստ կենտկոմի կարծիքի, հաճախ վոչ ցանկալի հետևանքներ են ունենում և հարված են հասցնում միութեան աշխատանքներին։ Ստորև բերվում են թվական տվեալներ կենտկոմի տրամադրութեան տակ եկած աշխատողների մասին 9 ամսվա ընթացքում։

Կենտկոմի տրամադրութեան տակ եկել են աշխատողներ

Վ.որտեղից	Քանակը
Անդրկովկ. կոմիտեից	8
Զանազան գավառներից	37
Ընդամենը	45

Այդ աշխատողներն հետեվեալ կերպով են բաշխված

Ո՞ւր են ուղարկվել	քանի՞ հոգի	Ո՞ւր են ուղարկվել	քանի՞ հոգի
Անդր. կոմիտարարամագրութեան տակ	4	Լոռի	1
Կենտկոմին	1	Դարալագեազ	7
Երևանի կոմիտեին	3	Նոր Բայազետ	4
Ալեք-պոլի »	4	Քարվանսարա	5
Էջմիածնի »	9	Զանգեզուր	2
Ղարաքիլիս. »	5		
		Ընդամենը . .	45

Մոբիլիզացիայի շնորհիվ ուղարկվել են կարմիր բանակում աշխատելու 5 հոգի։

Միութեան անդամներ են ուղարկվել կենտկոմի կողմից նաև Երևանի հրամանատարական կուրսերը և 23 հոգի նավաստիների դպրոցը։

Գ. Ենկավարություն

Կենտրոնական կոմիտեն ղեկավարել և տեղերի աշխատանքը հրահանգների, շրջաբերականների և կենտկոմի անդամների անձնական այցերի միջոցով։ Կենտրոնական կոմիտեի անդամները և հրահանգիչները աշխատանքը կանոնավորելու և ցուցմունքներ տալու նպատակով, այցելել են հետևեալ գավառները. Էջմիածին—3 անգամ, Ղարաքիլիսա-2 անգամ, Լոռի-2, Քարվանսարա-2, Ն. Բայազետ-2, Զանգեզուր-1 և Ալեք-պոլ-1 անգամ։

Ընդհանրապես կարելի է ասել, որ բոլոր հիշեալ աշխատանքները կազմակերպչական տեսակետից ստեղծեցին միութենական կազմակերպութիւնները, ստեղծեցին աշխատունակ, ուժեղ կազմ ունեցող գավակներ ու միաժամանակ հնարաւորութիւն տանելու ապագայում սիստեմատիկ ագիտ-պրոպագանդիստական աշխատանք։

ԱԳԻՏԱՑԻՈՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մինչև համամայական առաջին համագումարը այս բաժնի աշխատանքը փաստացիորեն հանգում էր մի քանի կարևոր քաղաքական ագիտացիոն կամպանիաների։

Այդ շրջանում անհնար էր կանոնավորել ներքին միութենական ինքնակրթութեան սիստեմատիկ աշխատանքը։

Համագումարը վերոշեց այս բաժնի ընդհանուր խնդիրները։ Միութեան ընդհանուր աշխատանքի պայմաններին համապատասխանելով, նա անհրաժեշտ գտավ խորացրած կրթական աշխատանքից առաջ, մի շարք նախապատրաստական աշխատանքների կատարումն։ Օրինակ.

1. բաժնի ապպարատների ստեղծումն տեղերում, 2. համապատասխան կապերի հաստատումն պետական կուսակցական ու այլ և այլ քաղաքական և կուլտուր-կրթական հաստատութիւնների հետ, 3. տանել միութենական կազմակերպութիւններում անհրաժեշտ ագիտացիոն աշխատանքը, վերը պիտի օժանդակեր խորհրդային իշխանութեան և կուսակցութեան գաղափարների տարածմանը անկուսակցական երիտասարդութեան մեջ և միւս կողմից պիտի ամրացներ միութեան կազմակերպչական դրութիւնը։

Բաժնի աշխատանքը, վերը սերտորեն կապված ու կախված է միութեան ընդհանուր կազմակերպչական

գրութիւնից, չէր կարող իհարկէ ընդարձակվել ու սկսել գործադրել իր հիմնական խնդիրները մասսաների քաղաքական կրթութեան ասպարիզում մինչև ամբողջ միութեան վերջնական ձևակերպումն ու նրա ապպարատների ուժեղացումն։

Վորովհետև հրամայականորեն պահանջվում էր ստեղծել բաժնիս ուժեղ ապպարատները տեղերում, վորոնք կարող ու ընդունակ լինեն անցկացնելու կեանքում լուրջ քաղաքա-կրթական աշխատանքին նախընթաց նախապատրաստական աշխատանքները, նմանապես աշխատանքի հիմքում դնել վորոշ սիստեմ և ծանոթացնել բաժնի աշխատողներին աշխատանքի հիմնական ձևերի ու միջոցների հետ, Կ. Կոմիտեի ազիտ բաժինը անհրաժեշտ համարեց հրավիրել բոլոր գավառների համապատասխան աշխատանքները դեկավարող ընկերների խորհրդակցութիւն, վորն և հրավիրվեց սեպտեմբերի 20-ին։

Խորհրդակցութիւնը ծանոթացրեց տեղերի աշխատողներին քաղ-կրթական ամբողջ աշխատանքին և ընդգծեց հետագա երկու ամիսների համար աշխատանքի հեռանկար պլանն ու խնդիրները. բաժնի ապպարատների ուժեղացումը, սերտ կապի հաստատումն համապատասխան միութենական ու այլ և այլ օրգանների հետ, նախապատրաստական աշխատանքներ այբբենական անգրագիտութեան վերացման համար (անգրագետների հաշվառումն), ագիտացիոն աշխատանքի ուժեղացումն, ըստ հնարավորութեան ակումբների բացումն, գավառներում տարանիչկաների (թերթիկների), ձեռագիր լրագրերի հրատարակութիւնը և այլն և այլն։

Այս աշխատանքին զուգընթաց բաժինս 1921 թ. սեպտեմբերից սկսեց մրութենական լայն մասսաներին խոր-

հրդային շինարարության գործին մասնակից դարձնելու աշխատանքը։

Այս ասպարիզում ամենակարևոր մոմենտը կազմում էր պարենաուրքի հավաքման կամպանիան։ Պարենաուրքի հավաքումից առաջ սկսած ագիտացիան տվեց այնպիսի վայելուն հետևանքներ, որ միությեան բոլոր դիւղական կազմակերպութիւնները ակտիվ մասնակցութիւն ցույց տվին պարենաուրքի հավաքման։

Այսպես, օրինակ, Ն. Բայազետի ամբողջ գավառում պարենաուրքը հավաքվեց գրեթե բացառապես միությեան ուժերով։ Սակայն պետք է ասել, որ այս աշխատանքները վորոշ բացասական ազդեցութիւն թողին միությեան ընդհանուր աշխատանքների վրա, վորովհետև Ն. Բայազետի գավկոմի, գավմասկոմների ամբողջ կազմը միությեան շարքային անդամների հետ մոբիլիզացիայի ելն ենթարկվել վերոհիշեալ աշխատանքների համար։

Միւս գավառներում չնայած այս չափերի չեր հասնում միությեան մասնակցութիւնը վերոհիշեալ կամպանիայում, սակայն, այնուամենայնիվ բավական զգալի եր։

Կենտկոմի I պլենումից հետո (նոյեմբերին) աշխատանքը սկսում է ավելի հետևողական ու սիստեմատիկ բնույթ ընդունել. բաժնիս (որն արդեն փոխված եր քաղ-լուս'ից 1921 թ. 22 նոյեմբ'երից ագիտ-պրոպի) աշխատանքը ընթանում է արդեն ավելի ընդգծված, ավելի ցայտուն երեք հետևեալ ուղղութիւններով. I. միությեան անդամների քաղաքական կրթութիւն (ներքին միությենական կրթական աշխատանք), II. մասնակցութիւն խորհրդային շինարարության մեջ և III. աշխատանք անկուսակցական երիտասարդության շրջանում։

Միութեան անդամների քաղաքական դաստիարակութիւնը

Այս աշխատանքը տարվել է սիստեմատիկաբար քաղաքներում, գոյութիւն ունեցող երկու կլուբներում, խրճիթ-ընթերցարաններում և երկու քաղաքական անգրագիտութեան վերացման դպրոցներում (Ալեք-պոլում և Իջևանում)։

Գիւղերում ամառային աշխատանքների պատճառով, քաղաքական աշխատանքները վերջերս վորոշ չափով թուլացել են։ Համենայն դեպս մինչև այժմ տարված ուժեղ աշխատանքի շնորհիվ վորոշ չափով բարձրացված է գիւղերում մլուութեան անդամների քաղաքական պատրաստութեան մակարդակը, իսկ մի քանի վայրերում, ինչպես օրինակ Ալեք-պոլում, Երևանում և Իջևանում, տարրական քաղաքական անգրագիտութիւնը վերացված է։

Ձեռնարկված է արդեն ավելի խորացրած աշխատանք, վորոշ ծրագրով և հիմք է դրված մարքսիստական կրթութեան ակտիվիստների խմբակների միջոցով։

Մամուլ

Մամուլը սկզբից և ետ դրված եր լավ հիմքերի վրա։

Կ. Կամիտեի մամուլի ենթաբաժնի կողմից հրատարակվում եին երեք ստրանիչկաներ հայերեն, թուրքերեն և ռուսերեն լեզուներով, գլխավորապես ղեկավարող բջնոյթ կրող։ Գավառներում հրատարակվում եին ստրանիչկաներ ու ձեռագիր պատի լրագրեր՝ մասսայական դիւրամատչելի բովանդակութեամբ։

Սույն թվի հունվարի 1-ից Կ. Կ. սկսեց հրատարա-

Ակել առանձին շաբաթաթերթի «Երիտասարդ կոմունիստ» և սարանիչկաներ ռուսերեն ու թուրքերեն լեզուներով։

Ընդամենը 1 համահայկական համագումարից մինչև օրս լույս է ընծայվել «Երիտասարդ կոմունիստ» վորպես սարանիչկա 16 համարներ, իսկ վորպես առանձին թերթ 15 համարներ։

Թերթի հրատարակությունը կապված է մի շարք անհաղթելի տեխնիկական-նյութական դժվարությունների հետ, վոր հիմնական պատճառն է հանդիսանում թերթերի հրատարակության մեջ տեղի ունեցած ընդմիջումների ու վատուց ենթադրված միությունական ժուրնալի հրատարակության չիրագործելուն։

Խորհրդային շինարարության շրջանում

Այս աշխատանքը արտահայտվել է մի շարք ագիտացիոն կամպանիաներում ու գործնական մասնակցության մեջ այլ և այլ ձեռնարկություններում։ Այսպես անցկացրված են մինչև օրս հետևյալ կամպանիաները.

1. Պարենտուրք. 2. Զորահավաք. 3. Խորհրդայնացում. 4. Վոլգայի սովեալների շաբաթ 5. Սերմանման կամպանիա։

Պարենտուրքի հավաքումը։ Ինչպես վերը ասվեց, միությունը այս ասպարիզում ցույց է տվել եռանդուն մասնակցություն։

Պարենտուրքի գլալի տոկոսը հավաքվել է կոմսոմոլի անդամների միջոցով։

2. Զորահավաքի ժամանակ միությունը, ինարկե, նույնպես իր ամբողջ գործունեությամբ և ագի-

տացիայի շնորհիվ ցույց է տվել զգալի օժանդակություն։

3. Խորհրդայնացման կամպանիային նույնպես միությունը ցույց է տվել կենդանի աջակցություն, որը ապացուցում է այն փաստը, որ խորհրդներում ու զանազան գործկոմներում ընտրվել են (ամբողջ Հայաստանում) 322 կոմերիտմիության անդամներ, որոնցից 120-ից ավելին ընկնում է միմիայն Երևանի գավառի վրա։

4. Մեծ-Վոլգեան սովեալներին օգնելու կամպանեային նույնպես մրցությունը օժանդակություն է ցույց տվել. կոմսոմոլիստներից կամ նրանց միջոցով հավաքված է հարիւրավոր փութ հացահատիկ և այլ մթերք։ Քաղաքների կազմակերպությունները տվել են իրենց աշխատավարձի վերոյ տոկոսը։ Հավաքվել է բավականին քանակությամբ դրամ նույն նպատակով կազմակերպված ելեկտրներից, ներկայացումներից և այլն և այլն։

5. Սերմանման կամպանիան, որում շահագրգռված էին իրենք գիւղացի մոր ընկերները, անցավ ավելի քան բավարար։ Միության անդամների միջոցով ցանված է մոտ 2000 փթից ավելի հացահատիկ զանազան արտերների և այլի միջոցով։ Լուրջ օժանդակություն է ցուցադրվել նաև Կարմիր բանակայինների ընտանիքներին։

Ագիտացիոն կամպանիաներ

Անցկացված են հետևեալ քաղաքական ագիտացիոն կամպանիաները.

1. Հոկտեմբերեան հեղափոխության քառամեակը։
2. Հայաստանի խորհրդայնացման տարեդարձը։
3. Մանկական շաբաթը։

4. «26» ի սպանության տարեդարձը։
5. Կարմիր բանակայինների շաբաթը։
6. Միության մամուլի օրը.
7. Հունվարի 9-ի օրը
8. Փետրվարեան հեղափոխության 5-դ տարեդարձը։
9. Կ. բանակի 4-դ տարեդարձը
10. Փարիզի կոմունայի տարեդարձը
11. Լենինի դեպքերը
12. Կուսակցության և միության մերձեցման շաբաթը։
13. Մայիսի 1-ը և այլն։

Վերջերումս աշխատանքը անկուսակցական երիտասարդության մեջ ավելանում է. պատկոմների ամբողջ քաղաքական ու կուլտուրական աշխատանքը տարվում է բացառապես կոմսոմոլի միջոցով։ Աշխատանքը ուսակերության մեջ կրում է նման բնույթ։ Գիւղերում այդ աշխատանքը տարվում է անկուսակցական կոնֆերանսների միջոցով։

Այբբենական անգրագիտության վերացման նպատակով կատարած աշխատանքը

Այդ աշխատանքը տարվել է գլխավորապես պետական օրգանների միջոցով և տեղ տեղ մեր միության տեսչական ուժերով (ինչպես օրինակ Քարվանսարայի, Երևանի և Լոռվա գավառներում)։

Պետք է խոստովանել, որ այդ ուղղությամբ տարված է չնչին աշխատանք, որովհետև միության անդամների 30 տոկոսը դեռ անգրագետ է և անհրաժեշտ է, որ համադումարը հարվածային համարելով այդ խնդիրը, առաջարկի նորընտիր կենտկոմին որոշ ժամանակա-

միջոցում (ինչպես այդ անում են մեր կուսակցութիւնը և Կարմիր Բանակը) միանգամայն վերացնել անգրագիտութիւնը միութեան շարքերից։

Գ. Ե կ ա վ ա ր ո ւ թ ի ւ ն ը

Կ. Կ. ագիտ բաժինը դեկավարել և տեղերի աշխատանքը հրահանգների, շրջաբերականների և նամակների միջոցով։

Ընթացիք կամպանիաների առթիվ ուղարկվել են համապատասխան թեզիսներ։

Ամբողջ աշխատանքի ընթացքում գոյութիւն է ունեցել սերտ կապ Կ. Կ. Կ. Կ. ագիտ բաժնի հետ, վորը վերջերումս առանձնապես ուժեղացել է։

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ-ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ *)։

1. Շրջաբերական կոմ. կուսակցութեան և միութեան վերխարաբերութիւնների մասին։

2. Շրջաբերական բանվորական կազմակերպութիւնների ուժեղացման մասին։

3. Շրջաբերական սրանսպորտի վրա աշխատելու մասին։

4. Շրջաբերական գիւղական կազմակերպութիւնների մասին։

5. Շրջաբերական նոր աշխատողներ առաջ քաշելու մասին։

---

*) Հիշված են ամենակարևոր նշանակութիւն ունեցող հրահանգները և շրջաբերական երը։

6. Երջաբերական նամակ ինֆորմացիայի, ստատիստիկայի և հաշվեառման միասնական ձևի մասին։

7. Հրահանգներ զտումը անցկացնելու մասին։

8. Աշակերտության մեջ աշխատանք տանելու մասին։

6. Պատասխանատու աշխատողներին բջիջներին կցելու մասին։

10. Հրահանգներ զտումից հետո նոր անդամների ընդունելության մասին։

11. Երջաբերական գավառային կոնֆերանսների մասին։

12. Թեզիսներ միության հերթական խնդիրների մասին և այլն։

Ագիտ-պրոպ բաժնի կողմից ուղարկված հրահանգների և օրջաբերականների ցուցակը։

1. Երջաբերական գավկոմների և շրջկոմների ագիտ-պրոպ բաժինների ֆունկցիաների մասին։

2. Երջաբերական ագիտացիայի մեթոդների մասին։

3. Հրահանգ ակումբային աշխատանքների մասին։

4. Հրահանգ քաղքրագիտության դպրոցների կազմակերպման մասին։

5. Քաղքրագիտության դպրոցների ծրագիրը։

6. Ուղարկված նյութեր թեզիսներ դանդաղ ագիտացիոն կամպանիաների առթիվ և այլն։

ՄՐԽԻՎ
ԳՐԱՊԱԼԱ
Հ.Կ.Կ(Բ)Կ.Կ
Ա.Կ.Կ.Պ.(Բ)Հ.
ՊԵՏ*ԳՐԱԴ*ԳՈՐԾԿՈՄ.
ԲԻԲԼԻՈԹԵԿԱ ԱՂԻՏ ԳՐԱԴՈՏԿ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՆԻՍՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Նիստերի քանակը	Վիրքան հարցեր են քննված (ընդամենը)	Սրանցից կազմակերպչական հարցեր	Ագիտ-պրոպագանդիստական	Տնտեսական-իրավական	Աշխատողների տեղափոխութիւն	Ազգայ[illegible] մասնա[illegible] մէջ, [illegible] աշխատա[illegible]
3	19	0	4	1	3	

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԵՆՏԿՈՄԻ ԲԻՒՐՈՅԻ ՆԻՍՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Նիստերի քանակը	Վիրքան հարց է քննվել (ընդամենը)	Կազմակերպչական հարցեր	Ագիտ-պրոպ աշխատանքների մասին վերաբերվող հարցեր	Կարմիր բանակում աշխատելու մասին	Տրանսպորտի վրա աշխատելու մասին	Աշխատողների տեղափոխութեան մասին	Զանազան հարցեր
20	70	37	11	5	3	10	4

ՀՅ Ազգային գրադարան
NL0835836

Ի 67 –
Ի 93
122